

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
հանրապետական փուլի – 2022-2023 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 – րդ դասարան

- 1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 1միավոր
ա. Հունիսի 22-ի կեսօրին արևի ճառագայթների անկման անկյունը Կարնո դաշտում կլինի ավելի մեծ քան Մշո դաշտում
բ. Մարտի 21-ի կեսօրին արևի ճառագայթների անկման անկյունը Աշկալայի և Մանազկերտի դաշտերում կլինի հավասար
գ. Դեկտեմբերի 22-ի կեսօրին արևի ճառագայթների անկման անկյունը Խարբերդի դաշտում կլինի ավելի փոքր քան Երզնկայի դաշտում
դ. Հունիսի 22-ի կեսօրին ցերեկվա տևողությունը Մալաթիայի դաշտում ավելի կարճ է քան Ախալքալաքի սարահարթում
- 2. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 1միավոր
ա. Կլիմայի փոփոխության պայմաններում տունդրայի զոնայի տարածքը ընդարձակվում է
բ. Մշտական սառածության վերացումը տունդրայում կնպաստի ջերմոցային գազերի կրճատմանը
գ. Ջերմոցային էֆեկտի ուժգնացման պատճառներից մեկը տավարաբուծությունն է
դ. Ջրային տարածքների ընդարձակումը կնվազեցնի ջերմոցային գազերի կոնցենտրացիան մթնոլորտում
- 3. Ի՞նչ են նշանակում եզրայիններից յուրաքանչյուրը** 1միավոր
ա. բեռնալարվածություն բ. էոլային աշխատանք
- 4. Բնութագրով որոշել երևույթը** 1միավոր
Այս երևույթի առաջացման համար հիմնական նախապայմաններ են ծծմբի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների ավելացումը մթնոլորտում և բարձր հարաբերական խոնավությունը կամ ինտենսիվ արեգակնային ռադիացիան: Նպաստում է նաև ջերմաստիճանային ինվերսիան:
- 5. Ինչպե՞ս են կոչվում.**
ա. Գետի հունի ծալքերը (հատկապես արտահայտված են հարթավայրերում) 1միավոր
բ. Խոնավ հասարակածային անտառների կարմրադեղին հողերը 1միավոր
- 6. Խնդիրներ**
ա. Ա կետում (հս.լ. 42°; արլ. ե. 56°) գոտիական ժամանակը 16:00 է: Գտնել Ա և Բ կետում (հվ.լ. 21°; արլ.ե. 16°) տեղական ժամանակը: 1միավոր
բ. 1:6000 մասշտաբի տեղանքի հատակագծի վրա պատկերված լեռան ստորոտին ընտրվել է Ա կետը, իսկ գագաթին՝ Բ կետը: Ա և Բ կետերի միջև հորիզոնական հեռավորությունը հատակագծում 20սմ է: Ա կետը գտնվում է 1200մ հորիզոնականի, իսկ Բ կետը՝ 1800մ հորիզոնականի վրա: Որքա՞ն է լանջի թեքությունը Ա-Բ կտրվածքի հատվածում: 1միավոր
- 7. Թվարկել**
ա. ՀՀ գյուղատնտեսության մեջ արտահանման նշանակություն ունեցող 4 ճյուղերը 1միավոր
բ. Լատինական Ամերիկայից դուրս գտնվող բնակչությամբ գերխոշոր չորս երկիր, ուր տիրապետող կրոնը քրիստոնեությունն է 1միավոր
- 8. Դասավորել**
ա. Նշված տարածաշրջանները ըստ անտառապատվածության (%) ցուցանիշի նվազող հաջորդականության. Լատինական Ամերիկա, Ավստրալիա, Հյուսիսային Ամերիկա, Աֆրիկա 1միավոր
բ. Նշված երկրները ըստ անկախացման ժամանակագրության՝ հնից մինչև նոր. Արևելյան Թիմոր, Բրազիլիա, Սան Մարինո, ԱՄՆ 1միավոր


9. Բացատրել

ա. Արևադարձային ցիկլոնները հիմնականում ձևավորվում են հյուսիսային լայնության 10-30 միջակայքում, սակայն երբեք ոչ 0-5° լայնություններում: Ինչու՞ 1 միավոր

բ. Եթե հաշվի չառնենք կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումները, աշխարհում միջազգային զբոսաշրջիկների թիվը վերջին տասնամյակում անշեղորեն աճում է: Ներկայացնել դրա երկու գլխավոր պատճառ: 1 միավոր

10. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Վառելիքի տարբեր տեսակների բաժինը երկրների էներգետիկայի կառուցվածքում



ա. Ո՞ր երկիրն է ամենահինտենսիվը անցել այլընտրանքային էներգետիկայի (0.25 միավոր) և ո՞րն է այդ երկրի էներգետիկայի գլխավոր տեսակը ներկայումս (0.25 միավոր)

բ. Ինչո՞վ է պայմանավորված Ճապոնիայում վառելիքային ռեսուրսների դերի աճը էներգետիկայում 2010-2015 թթ. ժամանակահատվածում (0.5 միավոր)

գ. Ո՞րն է Եվրոպայում էներգետիկ անվտանգության գլխավոր խնդիրը ներկայումս (0.5 միավոր) և ի՞նչ լուծում ունի այդ խնդիրը (0.5 միավոր)

11. Նշել պատասխանը և հիմնավորել

ա. Պատագոնիայի սարահարթում խաղողի այգիները հորիզոնի ո՞ր կողմին նայող լանջերին է առավել նպատակահարմար տեղաբաշխել և ինչու՞ 1 միավոր

բ. Ճապոնիայի տարածքում դեպի ու՞ր են ձգտում պողպատաձուլական ձեռնարկությունները և ինչու՞ 1 միավոր


12. Համապատասխանեցնել քարտեզում 1-4 թվերով նշված տեկտոնական սալերի շփման հատվածները և ստորև նշված բնական աղետների ռիսկերը (օր.՝ 1-Ա)

Ա. Հնարավոր են միայն երկրաշարժեր, որոնք կարող են նաև աղետալի լինել

Բ. Հնարավոր է հիմնականում հրաբխային ակտիվություն, որը հազվադեպ է ուղեկցվում ուժեղ ցնցումներով

Գ. Հնարավոր են ինչպես ավերիչ երկրաշարժեր, այնպես էլ բուռն հրաբխականություն

Դ. Հնարավոր են ավերիչ երկրաշարժեր և հազվադեպ՝ նաև հրաբխականություն



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան